

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն. բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**



ԲԱՆԱՁԵՎ ԹԻՎ 259

ՎԵՐԱՎԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԹԻՎ 1 ՀՈԴՎԱԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌԵԼՈՒ ԴԵՊԻ ԵՆԹԱՍԱՀԱՐԱԿԱՆ ԱՖՐԻԿԱ ԵՎ ԻՐԱՔ

ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

Հիշատակելով թիվ 248 Բանաձևը, որով Կառավարիչների խորհուրդը սկզբունքորեն հավանություն է տվել Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնմանը դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք.

Ընդգծելով Ենթասահարական Աֆրիկայի և Իրաքի կարևորությունը միջազգային հանրության աշխարհաքաղաքական և զարգացման առաջնահերթություններին հասնելու համար, Ենթասահարական Աֆրիկայի շատ երկրների և Իրաքի ու ՎՋԵԲ-ի գործառնության ներկայիս երկրների միջև աճող կապերը, ինչպես նաև Բանկի մանդատի համապատասխանությունն ու կիրառելիությունը, բիզնես մոդելը, մասնավոր հատվածի կենտրոնացումը և իրավասությունները Ենթասահարական Աֆրիկայում և Իրաքում.

Ընդգծելով, որ Բանկի ամենահրատապ գերակայությունը մնում է Ուկրաինային և Ուկրաինայի դեմ պատերազմից տուժած այլ երկրներին աջակցելը.

Ընդունելով, որ Ուկրաինայի դեմ պատերազմն ամրապնդել է Ենթասահարական Աֆրիկայում և Իրաքում բաժնետերերի նպատակները լուծելու շարունակական նշանակությունը.

Ելնելով այն հանգամանքից, որ ցանկացած հնարավոր սահմանափակ և աստիճանական ընդլայնում դեպի նոր գործառնությունների երկրներ չպետք է խաթարի Բանկի կարողությունը՝ աջակցելու իր ընթացիկ գործառնությունների երկրներին, վարկաբեկի Բանկի եռակի A վարկանիշը, հանգեցնի լրացուցիչ կապիտալ ներդրումների պահանջի կամ շեղվի Բանկի մանդատից՝ աջակցելու անցումային գործընթացին և հավելյալ արդյունքի ու առողջ բանկային գործունեության սկզբունքներին.

Ընդգծելով փոխլրացման և համագործակցության կարևորությունը զարգացման գործընկերների միջև, որոնք արդեն ակտիվ են Ենթասահարական Աֆրիկայում և Իրաքում և

Հաշվի առնելով Կառավարիչների խորհրդին ուղղված Տնօրենների խորհրդի զեկույցը «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» և համաձայն լինելով նրա եզրակացություններին, ի թիվս այլոց, որ.

1. Կապիտալի և ֆինանսական հետևանքների վերլուծությունը վերահաստատում է, որ սահմանափակ և աստիճանական ընդլայնումը դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք ինքնին չի խաթարի Բանկի կարողությունը՝ աջակցելու իր գործող երկրներին, չի վտանգի Բանկի եռակի A վարկային վարկանիշը կամ հանգեցի լրացուցիչ կապիտալ ներդրումների պահանջի.
2. Բանկի գործառնությունների աշխարհագրական շրջանակի նման սահմանափակ և աստիճանական ընդլայնումը դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք պետք է հնարավորություն ընձեռվի Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի («Համաձայնագիր») 1-ին հոդվածի փոփոխության միջոցով և
3. Ընդլայնման իրականացումը պետք է իրագործվի այնպես, որ չթուլացնի Բանկի ուշադրությունը Ուկրաինային և Ուկրաինայի դեմ պատերազմից տուժած այլ երկրներին աջակցելու գործում.

ՈՐՈՇՈՒՄ Է, ՈՐ.

1. Համաձայնագրի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Տնտեսական առաջընթացին և վերակառուցմանը նպաստելիս Բանկի նպատակը պետք է լինի խթանել անցումը դեպի բաց շուկայական ուղղվածության տնտեսություններ և խթանել մասնավոր և ձեռնարկատիրական նախաձեռնությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, որոնք հավատարիմ են բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծություն և շուկայական տնտեսություն սկզբունքներին և կիրառում են դրանք: Նույն պայմաններով Բանկի նպատակը կարող է իրականացվել նաև (i) Մոնղոլիայում, և (ii) Հարավային և Արևելյան Միջերկրական ծովի անդամ երկրներում, և (iii) Ենթասահարական Աֆրիկայի սահմանափակ թվով անդամ երկրներում. (ii) և (iii) կետերով սահմանված յուրաքանչյուր դեպքում, ինչպես սահմանվում է Բանկի կողմից՝ կառավարիչների ոչ պակաս, քան երկու երրորդի դրական քվեարկությամբ, որոնք ներկայացնում են անդամների ընդհանուր ծայնի իրավունքի երեք քառորդից ոչ պակաս: Համապատասխանաբար, սույն Համաձայնագրում և դրա հավելվածներում «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները», «երկրները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայից», «ռեցիպիենտ երկիրը (կամ երկրները)» կամ «ռեցիպիենտ անդամ երկիրը (կամ երկրները)» ցանկացած հղում պետք է վերաբերի Մոնղոլիային և Հարավային և Արևելյան Միջերկրական ծովի և Ենթասահարական Աֆրիկայի երկրներից յուրաքանչյուրին ևս»:

ա. Համաձայնագրի թիվ 1 հոդվածով սահմանված «Ենթասահարական Աֆրիկա» տերմինը պետք է հասկանալ Համաշխարհային բանկի խմբի կողմից սահմանված Ենթասահարական Աֆրիկա տարածաշրջանը:

Ենթասահարական Աֆրիկայի անդամ երկրների թվի սահմանափակումը, որտեղ Բանկը կարող է իրականացնել իր նպատակը, ինչպես սահմանված է Համաձայնագրի 1-ին հոդվածով, պետք է հասկացվի այնպես, որ հնարավորություն ընձեռի Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական

ընդլայնմանը՝ Տնօրենների խորհրդի «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» զեկույցում սահմանված միջոցառումներին և մեխանիզմներին համապատասխան: Այս համատեքստում, ընդլայնման ցանկացած հետագա ավելացում հաստատելու համար պահանջվում է կառավարիչների ոչ պակաս, քան երեք չորրորդ կողմի դրական ձայնը, որը ներկայացնում է անդամների ընդհանուր ձայնի իրավունքի չորս հինգերորդից ոչ պակաս:

գ. Համաձայնագրի նպատակների համար Իրաքը կներառվի Հարավային և Արևելյան Միջերկրական տարածաշրջանի մեջ, և, հետևաբար, Համաձայնագրի թիվ 1 հոդվածով սահմանված «Հարավային և Արևելյան Միջերկրական ծով» տերմինը պետք է հասկացվի որպես տարածաշրջան, որը բաղկացած է այն երկրներից, որոնք ունեն Միջերկրական ծովի ափամերձ գիծ, ինչպես նաև Հորդանանից և Իրաքից, որոնք սերտորեն ինտեգրված են այս տարածաշրջանին:

2. Բանկի անդամներին պետք է հարցնեն, թե արդյոք նրանք ընդունում են նշված փոփոխությունը՝ (ա) կատարելով և Բանկին ի պահ հանձնելով փաստաթուղթ, որում նշված է, որ այդ անդամն ընդունել է նշված փոփոխությունը իր օրենսդրության համաձայն և (բ) ներկայացնելով ապացույցներ՝ Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ, որ փոփոխությունն ընդունվել է, և ընդունման փաստաթուղթը կազմվել և ի պահ է հանձնվել այդ անդամի օրենսդրությանը համապատասխան:

3. Նշված փոփոխությունն ուժի մեջ է մտնում երեք (3) ամիս հետո այն օրվանից, երբ Բանկը պաշտոնապես հաստատել է իր անդամներին, որ նշված փոփոխության ընդունման համար անհրաժեշտ պահանջները, ինչպես նախատեսված է Համաձայնագրի 56-րդ հոդվածով, բավարարվել են:

(Ընդունված է 2023 թվականի մայիսի 18-ին)

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն. բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևի՝ ավանդապահի կողմից հաստատված նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝**



(Handwritten signature)
Նելլի Սարոյան

RESOLUTION NO.259

AMENDMENT TO ARTICLE 1 OF THE AGREEMENT ESTABLISHING THE EUROPEAN BANK FOR RECONSTRUCTION AND DEVELOPMENT TO ENABLE A LIMITED AND INCREMENTAL EXPANSION OF THE GEOGRAPHIC SCOPE OF THE BANK'S OPERATIONS TO SUB-SAHARAN AFRICA AND IRAQ

THE BOARD OF GOVERNORS,

Recalling Resolution No.248, by which the Board of Governors approved, in principle, a limited and incremental expansion of the geographic scope of the Bank's operations to sub-Saharan Africa and Iraq;

Emphasising the importance of sub-Saharan Africa and Iraq to achieving the international community's geopolitical and development priorities, the growing links between many countries in sub-Saharan Africa and Iraq and current EBRD countries of operations, and the relevance and applicability of the Bank's mandate, business model, private sector focus and competencies in sub-Saharan Africa and Iraq;

Stressing that the most urgent priority of the Bank remains to support Ukraine and other countries of operations affected by the war on Ukraine;

Recognising that the war on Ukraine has reinforced the parallel relevance of continuing to address shareholder objectives in sub-Saharan Africa and Iraq;

Underlying that any possible limited and incremental expansion to new countries of operations must not: impair the Bank's ability to support its current countries of operations, compromise the Bank's triple-A rating, lead to a request for additional capital contributions, or deviate from the Bank's mandate to support transition and its operating principles of additionality and sound banking;

Emphasising the importance of complementarity and collaboration amongst development partners already active in sub-Saharan Africa and Iraq; and

Having considered the Report of the Board of Directors to the Board of Governors "*Amendment to Article 1 of the Agreement Establishing the European Bank for Reconstruction and Development in order to enable the limited and incremental expansion of the geographic scope of the Bank's operations to sub-Saharan Africa and Iraq*" and being in agreement with its conclusions, amongst others, that:

- (i) The analysis of the capital and financial implications reconfirms that a limited and incremental expansion to Sub-Saharan Africa and Iraq will not in itself impair the Bank's ability to support its existing countries of operations, compromise the Bank's triple-A credit rating, or lead to a request for additional capital contributions;
- (ii) Such limited and incremental expansion of the geographic scope of the Bank's operations to sub-Saharan Africa and Iraq should be enabled through an amendment of Article 1 of the Agreement Establishing the European Bank for Reconstruction and Development ('the Agreement'); and
- (iii) The implementation of the expansion must be carried out in a way that will not dilute the focus of the Bank in supporting Ukraine and other countries of operations affected by the war on Ukraine.

RESOLVES THAT:

1. Article 1 of the Agreement shall be amended to read as follows:

"In contributing to economic progress and reconstruction, the purpose of the Bank shall be to foster the transition towards open market-oriented economies and to promote private and entrepreneurial initiative in the Central and Eastern European countries committed to and applying the principles of multiparty democracy, pluralism and market economics. Subject to the same conditions, the purpose of the Bank may also be carried out in (i) Mongolia; ~~and in member countries of the Southern and Eastern Mediterranean;~~ and (iii) a limited number of member countries of sub-Saharan Africa; in each case under (ii) and (iii) as determined by the Bank upon the affirmative vote of not less than two-thirds of the Governors, representing not less than three-fourths of the total voting power of the members. Accordingly, any reference in this Agreement and its annexes to "Central and Eastern European countries", "countries from Central and Eastern Europe", "recipient country (or countries)" or "recipient member country (or countries)" shall refer to Mongolia and each of such countries of the Southern and Eastern Mediterranean and sub-Saharan Africa as well."

- a. The term "sub-Saharan Africa" as set out under Article 1 of the Agreement shall be understood to mean the sub-Saharan Africa region as defined by the World Bank Group.

- b. The limitation on the number of member countries of sub-Saharan Africa in which the Bank may carry out its purpose as set out under Article 1 of the Agreement shall be understood so as to enable a limited and incremental expansion of the geographic scope of the Bank's operations, in accordance with the measures and mechanisms set out in the report of Board of Directors *"Amendment of the Agreement Establishing the European Bank for Reconstruction and Development in order to enable the limited and incremental expansion of the geographic scope of the Bank's operations to sub-Saharan Africa and Iraq"*. In this context, an affirmative vote of not less than three-fourths of the Governors, representing not less than four-fifths of the total voting power of the members shall be required to approve any further increment to the expansion.
 - c. Iraq shall be incorporated into the Southern and Eastern Mediterranean region for the purposes of the Agreement, and consequently the term "Southern and Eastern Mediterranean" as set out under Article 1 of the Agreement shall be understood to mean the region consisting of the countries that have a shoreline on the Mediterranean as well as Jordan and Iraq, which are closely integrated into this region.
2. Members of the Bank shall be asked whether they accept the said amendment by (a) executing and depositing with the Bank an instrument stating that such member has accepted the said amendment in accordance with its law and (b) furnishing evidence, in form and substance satisfactory to the Bank, that the amendment has been accepted and the instrument of acceptance has been executed and deposited in accordance with the law of that member.
3. The said amendment shall enter into force three (3) months after the date on which the Bank has formally confirmed to its members that the requirements for accepting the said amendment, as provided for in Article 56 of the Agreement, have been met.

(Adopted 18 May 2023)